# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԵՎԵՌԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ *

*ՀՏԴ 323.2* *DOI: 10.52063/25792652-2025.1.24-102*

**ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ**
*ՀՀ ներքին գործերի նախարարության*
*ոստիկանության զորքերի կադրերի բաժնի պետ, փոխգնդապետ,*
*Երևանի դատական փորձագիտության և*
*հոգեբանության ինստիտուտի դասախոս,*
*ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի*
*քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ, իրավագետ, քաղաքագետ,*
*ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*
*tigran-ghazaryan@inbox.ru*
*ORCID: 0009-0004-7862-0178*

***Հոդվածի նպատակը քաղաքական կայունության վրա հասարակության բևեռացման ազդեցությունը գնահատելն է: Այն ուսումնասիրում է բևեռացման տարբեր պատճառները՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, պատմական և այլ ոլորտներում, ինչպես նաև դրա հետևանքները հասարակության համար, ինչպիսիք են սոցիալական լարվածությունը, քաղաքական բևեռացումը, տնտեսական ճգնաժամերը և սոցիալական կործանարար ազդեցությունները:***

***Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել բևեռացման հիմնական պատճառները և հետևանքները, հաղթահարման հնարավոր ուղիները, վերլուծել, թե ինչպես է բևեռացումը ազդում երկրի քաղաքական կայունության վրա, ինչպիսի խնդիրներ են առաջացնում քաղաքական կառույցների արդյունավետության ապահովման համար, թե ինչպես է կրճատվում հասարակության միասնությունը և քաղաքական երկխոսությունը:***

***Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական, համեմատական, վերլուծական, տեսական, պատճառահետևանքային և համակարգային մեթոդները:***

***Հետազոտության շրջանակներում կատարված հիմնական եզրահանգումն այն է, որ հասարակության բևեռացումը՝ որպես սոցիալական ու քաղաքական պրոցես, շարունակական և բարդ երևույթ է, որն ունի բազմաթիվ պատճառներ՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնոլոգիական և այլ բնույթներով: Այն կարող է առաջացնել լուրջ հետևանքներ՝ սկսած սոցիալական լարվածությունից մինչև քաղաքական համակարգի կաթվածահարում կամ տնտեսական խոչընդոտներ: Բևեռացումը ոչ միայն սրում է հասարակության մեջ եղած հակասությունները, այլ նաև վտանգում է հանրային համերաշխությունը, որը կենսական է քաղաքական կայունության ապահովման համար: Պետությունների ու հասարակությունների համար կարևոր է գտնել արդյունավետ միջոցներ այս երևույթի հաղթահարման նպատակով՝ հակազդելով հնարավոր***

* Հոդվածը ներկայացվել է 15.03.2025թ., գրախոսվել՝ 13.04.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

***պառակտմանը՝ կանխելու էթնիկական, կրոնական և քաղաքական հակամարտությունները և ապահովելու երկարաժամկետ կայունություն:***

**Հիմնաբառեր՝** *հասարակության բևեռացում, քաղաքական կայունություն, քաղաքական հակասություններ, սոցիալական լարվածություն, քաղաքական ինստիտուտներ, հակամարտություններ, ինստիտուցիոնալ թուլացում, արժեհամակարգային բախում, պոպուլիզմ, լեգիտիմություն:*

## Ներածություն

Այս ուսումնասիրությունն անդրադառնում է հասարակության բևեռացման հիմնական գործոններին, դրսևորման ձևերին և դրա հետևանքներին: Հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական, սոցիալ-տնտեսական և պատմական գործոններին, որոնք ձևավորել են հասարակության ներսում առկա պառակտումները: Ուսումնասիրության նպատակն է վերհանել այս երևույթի պատճառները, բացահայտել դրա հետևանքները և քննարկել այն հնարավոր միջոցները, որոնք կարող են նպաստել բևեռացված հասարակությունների համերաշխության և կայունության վերականգնմանը:

Հասարակության բևեռացումը՝ որպես սոցիալական, քաղաքական ու տնտեսական երևույթ, այնպիսի գործընթաց է, որը դրսևորվում է հասարակության տարբեր խմբերի միջև տարաձայնությունների և հակասությունների խորացմամբ, ինչի արդյունքում հասարակությունը բաժանվում է երկու կամ ավելի հակադիր ճամբարների՝ տարբեր արժեքներով, գաղափարներով ու շահերով: Այս գործընթացը ոչ միայն ազդում է հասարակության ներքին կայունության վրա, այլ նաև հստակորեն արտահայտվում է պետության քաղաքական համակարգում, տնտեսական վիճակում ու մշակութային ոլորտում: Բևեռացումը կարող է առաջացնել սոցիալական լարվածություն, նվազեցնել համախոհությունը, ավելացնել քաղաքական հակասությունները, իսկ այս ամենը սպառնում է պետական կառավարման արդյունավետությանը և երկարաժամկետ կայունությանը: Հասարակության բևեռացումը հաճախ առաջացնում է քաղաքական ծայրահեղականության և հակադրությունների ծաղկում, ինչն էլ կարող է հանգեցնել իշխանության կենտրոնացման կամ ժողովրդավարական գործընթացների խաթարման՝ դառնալով քաղաքական կայունության համար լուրջ սպառնալիք: Քննարկվում են նաև տարբեր տեսաբանների կողմից ներկայացված բևեռացման տեսություններ, և դրանք համադրվում են ներկայիս սոցիալ-քաղաքական իրավիճակների հետ՝ փորձելով բացատրել, թե ինչպես է այս գործընթացը ազդում ոչ միայն հասարակության, այլև պետական համակարգի վրա:

Այս հետազոտությունը նպատակ ունի պարզելու, թե ինչպես կարելի է կանխարգելել կամ մեղմել բևեռացման բացասական հետևանքները՝ պահպանելով հասարակության կայունությունը և ապահովելով երկրի քաղաքական անվտանգությունը:

## «Հասարակության բևեռացում» երևույթը. առաջացման պատճառները և հետևանքները

Ժամանակակից աշխարհում հասարակության բևեռացումն աճող և մտահոգիչ երևույթ է, այն արտահայտվում է տարբեր ձևերով՝ քաղաքական հակամարտություններից մինչև սոցիալական ու մշակութային բաժանումներ, ինչը հանգեցնում է լարվածության, կոնֆլիկտների և կառավարման դժվարությունների: *Հասարակության բևեռացում* հասկացությունը սոցիալական ու քաղաքական պրոցես է, որի ընթացքում հասարակությունը բաժանվում է երկու կամ ավելի հակադիր

խմբերի կամ ճամբարների՝ յուրաքանչյուրն իր տարբեր արժեքներով, գաղափարներով, շահերով կամ սոցիալական կարգավիճակներով: Այս խմբերի միջև հաղորդակցությունը նվազում է, և կողմերը հաճախ դժվարանում են գտնել ընդհանուր լեզու կամ փոխզիջում: Տարբեր հետազոտողներ տարբեր ձևերով են սահմանել այս հասկացությունը՝ կախված իրենց ուսումնասիրությունների համատեքստից և մեթոդաբանությունից: Մարքսիստական տեսանկյունից բևեռացումը կապվում է սոցիալական դասերի միջև հակասություններով՝ հարուստ և աղքատ, տեր և ստրուկ, կապիտալիստական շահերի ու աշխատավոր դասի շահերի միջև: Կ.Մարքսը կարծում էր, որ հասարակության բևեռացումը հիմնված է տնտեսական ոլորտի վրա, որտեղ տարբեր հասարակական խավեր ունեն տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքի պայմանների և նյութական բարեկեցության հետ: Նա նշում էր, որ այս բևեռացումը, եթե չհաղթահարվի, հանգեցնելու է հասարակական հեղափոխության (Marx 1867): Բևեռացումն առավել լայն սահմանել է Մ.Վեբերը՝ դրա մեջ ընդգրկելով ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական և սոցիալական տարրերը: Նա պնդում էր, որ բևեռացումը տեղի է ունենում ոչ միայն տնտեսական բազայի, այլ նաև սոցիալական և քաղաքական ոլորտներում՝ կապված իշխանության, հեղինակության, և խավերի միջև անհավասարության հետ: Վեբերն առանձնացրել է բևեռացման երեք հիմնական տեսակ՝ դասակարգային (կլասային), կառավարական (պաշտոնական), և պատիվ (շնորհատիրական): «Տնտեսություն և հասարակություն» (Economy and Society) աշխատության «Դասակարգ, կարգավիճակ, կուսակցություն» բաժնում ներկայացված է սոցիալական շերտավորման բազմաչափ մոդել, որը ներառում է տնտեսական դասակարգը, սոցիալական կարգավիճակը և կուսակցությունները՝ որպես իշխանության բաշխման հիմնական բաղադրիչներ: Չնայած Վեբերը չի օգտագործում «սոցիալական բևեռացում» տերմինը, նրա վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես են այս բաղադրիչները նպաստում սոցիալական անհավասարության խորացմանը: (Weber 1922; Economy and Society): Բորդյուի տեսանկյունից բևեռացումը դիտվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև մշակութային և սոցիալական դաշտերում՝ կապված հասարակության ներսում գործող տարբեր տարածքների (այդ թվում՝ կրթության, արվեստի, կրոնի, խոսքի) հետ: Նա շեշտում էր այն, որ խավերի միջև հակադրությունները տեղի են ունենում նաև գաղափարախոսական մակարդակով՝ կապված «շնորհատիրական» հավասարության (առանց առանձնակի նյութական հիմնավորում) հետ: Բորդյուի թեզը նշում է, որ բևեռացումը տեղի է ունենում ոչ միայն նյութական միջոցների, այլ նաև խորհրդանշական կապիտալի (վարկանիշի, հեղինակության) տարբերությունների արդյունքում (Bourdieu 1984): Հանտինգթոնը նշում է, որ բևեռացումը կարող է դրսևորվել նաև քաղաքական դաշտում՝ երբ հասարակության տարբեր հատվածներ ունեն հակառակ գաղափարախոսություններ կամ աշխարհայացքներ: Նա հատուկ շեշտում է հասարակության մեջ բևեռացման հնարավորությունը՝ կապված ազգային ու կրոնական արժեքների հակասության հետ: Հանտինգթոնը քաղաքական բևեռացումը դիտում է որպես համաշխարհային հակամարտությունների կամ պատերազմների առաջացման հիմնական գործոններից մեկը՝ կրոնական ու մշակութային պատկանելության հիման վրա (Huntington 2004):

Այսպիսով՝ պարզ մեկնաբանմամբ հասարակության բևեռացումը մի գործընթաց է, երբ մարդիկ օտարանում են, հակադրվում և սկսում պայքարել միմյանց դեմ: Հասարակության տարբեր խմբերի միջև առաջանում են խորը տարաձայնություններ՝ կապված արժեքների, գաղափարախոսությունների, քաղաքական հայացքների կամ սոցիալական հարցերի հետ:

Հասարակության բևեռացումը բարդ և բազմաշերտ գործընթաց է, որը երբեք չի պայմանավորվում մեկ խթանիչով: Այն ձևավորվում է մի շարք խորքային և փոխկապակցված գործոնների ազդեցությամբ, որոնք կարելի է դասակարգել ըստ իրենց բնույթի՝ սոցիալ-տնտեսական, մեդիա և տեղեկատվական, քաղաքական,

արժեհամակարգային, պատմական ու ինստիտուցիոնալ, կրթական ու մշակութային, տեխնոլոգիական, ինչպես նաև հոգեբանական ու արտաքին ազդեցությունների: Ստորև ներկայացվում է այս պատճառների համակարգված վերլուծությունն ու բնութագրումը՝ ուղեկցված բնորոշ օրինակներով:

**Սոցիալ-տնտեսական**

Բևեռացման հիմնական խթանիչներից են սոցիալ-տնտեսական անհավասարությունները, որոնք խորացնում են հասարակության տարբեր խմբերի միջև օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբերությունները:

• Անհավասարություն – Հասարակության մի հատվածի մոտ կուտակվող տնտեսական ռեսուրսների աճը՝ մյուս հատվածի կենսամակարդակի անկման ֆոնին, հանգեցնում է համատարած դժգոհության և սոցիալական ընդհատումների: Օրինակ՝ ԱՄՆ-ում «Occupy Wall Street» շարժումը արտահայտում էր դժգոհություն հարուստ 1%-ի և մնացած հասարակության միջև աճող եկամտային անհավասարության դեմ (Volle 2025):

• Տարանջատում – Հասարակության խմբերի աշխարհա-գրական, սոցիալական կամ մշակութային առումով մեկուսացումը կարող է խաթարել փոխըմբռնման և համակեցության հնարավորությունը: (Հարավաֆրիկյան Հանրապետությունում ապարտհեյդի ժամանակաշրջանի տարածքային սեգրեգացիան առաջացրեց խորքային էթնիկ պառակտում) (Encyclopedia Britannica 2025)

• Մրցակցություն ռեսուրսների համար – Սուղ ռեսուրսների՝ աշխատանքային շուկայի, կրթության կամ բնակարանային հարցերի շուրջ մրցակցությունը սրում է սոցիալական լարվածությունը: (Եվրոպայում միգրանտների հոսքը հաճախ ընկալվում է որպես սպառնալիք տեղական աշխատաշուկային և սոցիալական համակարգերին:)

**• Մեդիա և տեղեկատվական միջավայր**

• Ժամանակակից մեդիայի դերն առանցքային է հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում, սակայն դրա որոշակի դրսևորումները կարող են նպաստել բևեռացման խորացմանը:

• Ֆիլտրի փուչիկ **–** Սոցիալական մեդիայի ալգորիթմները հաճախ առաջարկում են միայն այնպիսի բովանդակություն, որը համահունչ է օգտատիրոջ նախասիրություններին՝ սահմանափակելով հակադիր տեսակետների ընկալումը: Օրինակ՝ Facebook-ի գործարկման մեխանիզմները հաճախ նպաստում են օգտատերերի կարծիքի փակ «պղպջակներում» մնալուն:

• Ապատեղեկատվություն և մեդիայի կողմնակալություն **–** Ինֆորմացիոն դաշտի մանիպուլյատիվ բնույթը խաթարում է հանրային վստահությունը, խորացնում հոսքերին բաժանված ընկալումները: (Brexit-ի քարոզարշավում մեդիայի միջոցով տարածված ապատեղեկատվությունն ազդեց որոշումների վրա՝ խթանելով բևեռացում «մնալու» և «լքելու» կողմնակիցների միջև)

**Քաղաքական հակասություններ**

Քաղաքական համակարգի բնույթը և կուսակցական պայքարի հռետորաբանությունը հաճախ գործում են որպես բևեռացնող մեխանիզմներ:

• Գաղափարական բախում – Քաղաքական հայացքների ծայրահեղացումը խաթարում է տարբեր խմբերի համագործակցությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ում դեմոկրատների և հանրապետականների միջև խորացող գաղափարական անդունդը խանգարում է ազգային միասնության ձևավորմանը:

• Պոպուլիզմ և արմատականություն – Որոշ առաջնորդներ շահարկում են հասարակության դժգոհությունները՝ առաջարկելով պարզեցված լուծումներ բարդ խնդիրների համար: (Բրազիլիայի նախագահ Ժաիր Բոլսոնարուի պոպուլիստական մոտեցումները խթանեցին քաղաքական և սոցիալական պառակտումը)

• Քաղաքական քարոզչություն – Լրատվամիջոցների օգտագործումը որպես միջոց՝ թշնամու կերպարի ձևավորման կամ հասարակական շերտերի հակադրության

խորացման համար: (Ռուսաստանում պետական լրատվամիջոցները հաճախ ներկայացնում են Արևմուտքը որպես սպառնալիք՝ ամրապնդելով ազգայնական դիրքորոշումները)

**Հասարակության արժեհամակարգի փոփոխություն**

Հասարակական արժեքների փոփոխությունը՝ գլոբալիզացիայի ազդեցությամբ, կարող է առաջացնել սերունդների կամ մշակույթների միջև բախում: Օրինակ՝ LGBTQ+ համայնքի իրավունքների ընդլայնումը մի շարք ավանդապաշտ հասարակություններում ընկալվում է որպես սպառնալիք ավանդական արժեքներին՝ առաջացնելով լուրջ արժեհամակարգային դիմադրություն:

**Պատմական և ինստիտուցիոնալ պատճառներ**

Պատմության ընթացքում կուտակված անարդարությունները և ինստիտուցիոնալ թուլությունը կարող են երկարաժամկետ ազդեցություն ունենալ բևեռացման խորացման վրա:

- Պատմական անարդարություն – Անցյալի չլուծված հակա-մարտություններն իրենց ազդեցությունը թողնում են նաև ներկայի վրա: (ԱՄՆ-ում ռասայական խտրականության պատմական ժառանգությունը շարունակում է ազդել հասարա-կական բաժանումների վրա)
- Թույլ ինստիտուտներ և կառավարում – Երբ պետական կա-ռույցները չեն ապահովում թափանցիկություն և հաշվետվություն, հասարակության ներսում աճում է անվստահությունն ու պառակտումը: (Լիբանանում կառավարության հանդեպ խորացած անվստահությունը հանգեցրել է բազում հանրահավաքների և քաղաքական ճգնաժամերի)

**Կրթական և մշակութային տարբերություններ**

Հասարակության կրթական և մշակութային մակարդակների տարբերությունը կարող է խոչընդոտել փոխըմբռնումը և նպաստել բևեռացմանը:

- Կրթության անհավասարություն – Կրթական ռեսուրսների անհավասար բաշխումը խորացնում է սոցիալական շերտավորումը: (Հնդկաստանում կրթության անհավասար հասանելիությունը քաղաքային և գյուղական բնակչության միջև առաջացնում է զգալի սոցիալական տարբերություններ)
- Մշակութային ու կրոնական տարբերություններ – Հատկապես միգրանտների ինտեգրման բարդությունները կարող են հասարակության որոշ հատվածների մոտ առաջացնել վախ կամ անտագոնիզմ: (Ֆրանսիայում իսլամական մշակութային արտահայտությունների շուրջ քաղաքական վեճերը վերածվել են ազգային ինքնության և ազատության գաղափարների բախման)

**Տեխնոլոգիական պատճառներ**

Թվային տեխնոլոգիաները, հատկապես՝ սոցիալական մեդիայի հարթակները, զգալի ազդեցություն ունեն տեղեկատվության սպառման և հասարակական տրամադրությունների վրա:

- Սոցիալական մեդիայի ալգորիթմներ – Բովանդակության ընտրության ավտոմատացված մեխանիզմները հաճախ ամրապնդում են արդեն իսկ գոյություն ունեցող կարծիքները: (YouTube-ի առաջարկվող բովանդակությունը հաճախ ուղղորդում է օգտատերերին դեպի ծայրահեղ կամ կեղծ տեղեկատվություն)
- Տեղեկատվության մեկուսացում – Օգտատերերը հաճախ խուսափում են հակադիր տեսակետներից՝ նախընտրելով միայն իրենց համոզմունքներին համահունչ աղբյուրներ: Օրինակ՝ պատվաստումների վերաբերյալ վեճերում տեղեկությունների ընտրողական սպառումը հանգեցնում է գիտական փաստերի անտեսման:

**Արտաքին ազդեցություններ**

Տարբեր պետություններ երբեմն փորձում են ազդել այլ երկրների հասարակական կառուցվածքի վրա՝ խթանելով ներքին պառակտումը:

• Քաղաքական միջամտություն – Մյուս երկրների ներքին գործերին միջամտելու նպատակով կիրառվում են տեղեկատվական և կիբերխախտումներ: (ԱՄՆ 2016 թ. նախագահական ընտրություններին Ռուսաստանի ենթադրյալ միջամտությունը վկայում է արտաքին ազդեցության հզոր ներուժի մասին)

• Կիբերհարձակումներ և քարոզչություն – Թիրախավորված քարոզչությունը սոցիալական մեդիայի միջոցով կարող է նպաստել հասարակության շերտավորման և վստահության անկմանը: Օրինակ՝ Ուկրաինայի տեղեկատվական դաշտի դեմ ուղղված հիբրիդային հարձակումները նպատակ ունեին ապակայունացնելու ներքին հասարակական միասնականությունը:

**Հոգեբանական պատճառներ**

Բևեռացման գործընթացը խորապես պայմանավորված է նաև մարդկային ընկալման առանձնահատկություններով:

• Ճանաչողական աղավաղումներ – Մարդիկ վստահում են միայն այն տեղեկատվությանը, որը հաստատում է իրենց նախնական համոզմունքները: Օրինակ՝ դավադրապաշտական տեսությունները լայն տարածում են ստանում հատկապես այն շրջանակներում, որտեղ գիտական ռացիոնալությունը մերժվում է:

• Խմբային ինքնություն – Հասարակական խմբերին պատկանելը հաճախ ուղեկցվում է «մենք ընդդեմ նրանց» տրամաբանությամբ, ինչը դժվարեցնում է փոխըմբռնումը: Օրինակ՝ սպորտային երկրպագուների միջև ձևավորվող հակադրությունները կարող են վերաճել ագրեսիայի և ֆիզիկական բախումների:

Հասարակության բևեռացման հետևանքները կարող են լինել բազմազան և խորը՝ ազդելով ինչպես անհատների, այնպես էլ ամբողջական հասարակության վրա: Բևեռացման հիմնական հետևանքներից կարելի է նշել.

1. Սոցիալական լարվածությունն ու բախումները, երբ մարդկանց տարբեր խմբերի միջև խորանում են թշնամանքն ու անվստահությունը: Նման իրավիճակները հաճախ հանգեցնում են կոնֆլիկտների՝ հանրային ցույցերից մինչև ֆիզիկական բախումներ:

2. Քաղաքական համակարգի կաթվածահարում

Այս դեպքում քաղաքական կառույցները դառնում են ոչ արդյունավետ, քանի որ տարբեր խմբեր հրաժարվում են համագործակցել: Ընդ որում՝ բևեռացված հասարակությունում պոպուլիստական գործիչներն ավելի հեշտությամբ կարող են շահարկել հակասությունները (*Իսրայելում վերջին տարիների քաղաքական ճգնաժամը*, բևեռացված քաղաքական դաշտի պատճառով ընտրությունները մի քանի անգամ կրկնվեցին (2019–2022թթ.), և կառավարություն կազմել չէր հաջողվում: Այս գործընթացը հստակ ցույց է տալիս համագործակցության անկարողությունը քաղաքական բևեռացվածության պայմաններում):

3. Տնտեսական հետևանքներ

Բևեռացման պայմաններում տնտեսությունը հաճախ հայտնվում է անկայունության վիճակում: Քաղաքական և սոցիալական լարվածությունները կարող են նվազեցնել ներդրումների հոսքը, խոչընդոտել գործարար միջավայրի կայունությունը, իսկ աշխատանքային հարթակներում հակասությունները կարող են բերել արտադրողականության անկման:

4. Սոցիալական կապերի թուլացում

Հասարակական բևեռացումը հանգեցնում է փոխհարա-բերությունների քայքայման՝ նույնիսկ ամենամոտ շրջապատում: Ընտանեկան և ընկերական հարաբերություններ կարող են լարվել կամ նույնիսկ քանդվել տարբեր քաղաքական

կամ աշխարհայացքային դիրքորոշումների պատճառով, իսկ համայնքներում վերանում է փոխադարձ վստահությունն ու համերաշխության զգացումը:

5. Կրոնական և էթնիկական հակամարտությունների աճ

Բևեռացման խորացման պայմաններում կրոնական և էթնիկական խմբերի միջև առաջանում են նոր լարվածություններ կամ խորանում հները: Այս վիճակն կարող է խթանել ատելության հռետորաբանությունն ու բռնության դրսևորումները՝ վտանգելով հասարակական համակեցության հիմքերը (*Մյանմա՝ ռոհինջաների ճգնաժամը*: Բուդդիստական մեծամասնության և մահմեդական փոքրամասնության միջև աճող բևեռացումը հանգեցրեց բռնաճնշումների, որոնք միջազգային հանրությունը գնահատեց որպես էթնիկ զտում):

6. Մեդիայի և տեղեկատվության անջրպետ

Տեղեկատվական դաշտում ձևավորվում են զուգահեռ իրականություններ, որտեղ մարդիկ օգտվում են միայն իրենց համոզմունքներին համահունչ աղբյուրներից: Սա հանգեցնում է տեղեկատվական մեկուսացման, ապատեղեկատվության տարածման և մեդիայի մանիպուլյատիվ ազդեցության աճի:

7. Իրավական համակարգի թուլացում

Երբ հասարակության խմբերը չեն վստահում իրավական ինստիտուտներին կամ տեսնում են կողմնակալություն արդարադատության մեջ, բևեռացումը խարխլում է օրենքի գերակայությունը: Այս պայմաններում որոշ խմբեր կարող են չընդունել դատարանների որոշումները կամ պետական մարմինների լեգիտիմությունը (*Լեհաստան և Հունգարիա*, որտեղ կառավարությունները քաղաքական բևեռացման պայմաններում 2015, 2016 և 2017 թվականներին իրականացրին դատական բարեփոխումներ, որոնք քննադատության արժանացան Եվրամիության կողմից՝ որպես դատական անկախության խաթարում: Հասարակության մի հատված կորցրեց վստահությունը դատարանների նկատմամբ՝ համարելով դրանք կառավարությանը ենթակա):

8. Հասարակական շարժումների ծայրահեղացում

Բևեռացված միջավայրում հասարակական շարժումները հաճախ շեղվում են կառուցողական ուղուց՝ որդեգրելով ծայրահեղական մոտեցումներ: Դժգոհության բարձր մակարդակը դառնում է պարարտ հող ռադիկալ գաղափարների տարածման և հասարակական ընդվզումների համար (*Ֆրանսիայում «Դեղին ժիլետների» շարժումը (Gilets Jaunes)* սկսվեց որպես բողոք վառելիքի հարկերի դեմ, սակայն աստիճանաբար ծայրահեղացավ՝ ներառելով բռնություններ, փողոցային անկարգություններ և ընդհարումներ ոստիկանության հետ: Բևեռացված հասարակության պայմաններում շարժումները հեշտությամբ շեղվում են կառուցողական պահանջներից):

9.Միջազգային միջամտության հնարավորության աճ

Խորը բևեռացված հասարակությունները դառնում են առավել խոցելի արտաքին ուժերի ազդեցության նկատմամբ: Միջազգային դերակատարները կարող են օգտագործել ներքին հակասությունները՝ հիբրիդային մեթոդներով ազդելու երկրի քաղաքական, տեղեկատվական կամ սոցիալական գործընթացների վրա:

Այսպիսով՝ բևեռացումը ոչ միայն սրում է հասարակության մեջ եղած հակասությունները, այլ նաև վտանգում է հանրային համերաշխությունը, որը կենսական է կայուն քաղաքական և սոցիալական զարգացման համար: Պետությունների ու հասարակությունների համար կարևոր է գտնել արդյունավետ միջոցներ այս երևույթի հաղթահարման համար՝ հակազդելով հնարավոր պառակտմանը, կանխելու համար էթնիկական, կրոնական և քաղաքական հակամարտությունները և ապահովելու երկարաժամկետ կայունություն:

## Հասարակության բևեռացման ազդեցությունը քաղաքական կայունության վրա. հետևանքներ և լուծման ուղիներ

Հասարակության բևեռացումը զգալի ազդեցություն ունի քաղաքական կայունության վրա: Այն կարող է թուլացնել քաղաքական ինստիտուտները, խթանել պոպուլիզմը և խորացնել ներքին հակասությունները: Քաղաքական կայունության վրա բևեռացումը ազդում է հետևյալ կերպ՝

**1. Քաղաքական ինստիտուտների կաթվածահարում**

Հասարակության բևեռացումը կարող է էականորեն ազդել քաղաքական ինստիտուտների վրա՝ հանգեցնելով դրանց թուլացմանը: Այս գործընթացը տեղի է ունենում մի քանի հիմնական մեխանիզմներով՝ 1. վստահության կորուստ ինստիտուտների նկատմամբ - բևեռացված հասարակություններում տարբեր խմբերը քաղաքական ինստիտուտները ընկալում են որպես կողմնակալ կամ կանխակալ: Սա խարխլում է հասարակության վստահությունը պետական կառույցների, դատարանների, խորհրդարանի և կառավարական մյուս մարմինների նկատմամբ: 2. Հակամարտության ուժեղացում քաղաքական դաշտում - բևեռացումը հանգեցնում է ընդդիմադիր քաղաքական ուժերի միջև կոշտ դիմակայության, որտեղ երկխոսությունը և համագործակցությունը փոխարինվում են կոնֆլիկտով: Իշխանությունն ու ընդդիմությունը հաճախ կենտրոնանում են միմյանց թուլացնելու վրա՝ զիջելով ինստիտուտների զարգացման և կայունացման նպատակը: 3. Հանրային մասնակցության նվազում - Երբ մարդիկ զգում են, որ իրենց կարծիքը չի հաշվի առնվում կամ որ ինստիտուտները ծառայում են միայն «մյուս կողմին», հանրային մասնակցությունը նվազում է: 4. Իրավական համակարգի քայքայում - բևեռացված միջավայրում քաղաքական ազդեցությունը հաճախ տարածվում է իրավական համակարգի վրա, ինչը նվազեցնում է դատարանների անկախությունը: Որոշումներն ընդունվում են ոչ թե օրենքի, այլ քաղաքական նպատակահարմարության հիման վրա: 5. Բևեռացված մեդիա - մեդիայի բաժանումը գաղափարական գծերով նպաստում է բևեռացման խորացմանը՝ մարդկանց տեղեկատվական բարձիկների (filter bubble) մեջ պահելով: Սա խոչընդոտում է իրական խնդիրների շուրջ ընդհանուր հասկացողության ձևավորումը, ինչը կարևոր է ինստիտուտների արդյունավետ գործարկման համար: 6. Քաղաքական ինստիտուտների փլուզում - քաղաքական բևեռացումը կարող է հանգեցնել սահմանադրական ինստիտուտների ոչնչացման: Օրինակ՝ իշխող խմբերը կարող են կրճատել անկախ վերահսկիչ մարմինների դերը կամ փոփոխել օրենքները՝ երկարացնելու իրենց իշխանությունը:

Քաղաքական ինստիտուտների ամրությունը կախված է հասարակության ներսում փոխըմբռնման և համերաշխության մակարդակից: Բևեռացման նվազեցումը կօգնի ոչ միայն նվազեցնելու կոնֆլիկտները, այլև ամրապնդելու ժողովրդավարական սկզբունքները:

**2. Պոպուլիստական շարժումների վերելք**

Հասարակության բևեռացումը նպաստում է պոպուլիստական շարժումների ակտիվացմանը՝ ստեղծելով հող սոցիալական, տնտեսական և ինստիտուցիոնալ դժգոհությունների շահարկման համար: Այս գործընթացը խթանում է "մեզ" և "նրանց" տրամաբանությունը, որը պոպուլիստների հիմնական գործիքն է: Բևեռացման հետևանքով, երբ ինստիտուտները չեն կարողանում արդյունավետ լուծել քաղաքական և սոցիալական խնդիրները, պոպուլիստ առաջնորդները դառնում են ավելի ազդեցիկ՝ խոստանալով "իրական ժողովրդավարություն" կամ "ազգային վերածնունդ": Սոցիալական մեդիան և բևեռացված լրատվամիջոցները խթանում են պոպուլիստական շարժումները՝ տարածելով պարզ և հաճախ ծայրահեղ գաղափարներ (Moffitt 2016):

**3. Քաղաքացիական կոնֆլիկտների վտանգ**

Հասարակության բևեռացումը նպաստում է քաղաքական կոնֆլիկտի աճին մի շարք պատճառներով, որոնցից են գաղափարական հակասությունների սրումը, հանրային դիսկուրսի կոշտացումը և ինստիտուցիոնալ հակամարտությունները: Բևեռացված հասարակություններում գաղափարական տարբերությունները վերածվում են անզիջում դիրքորոշումների: Արդյունքում, քաղաքական խմբերն ավելի հաճախ են մերժում համագործակցությունը՝ նախընտրելով կոնֆլիկտային մոտեցումներ (Mason 2018):

**4. Հանրային վստահության անկում**

Հասարակության բևեռացման հետևանքով հանրային վստահության անկումը արտահայտվում է հետևյալ հիմնական ձևերով՝ սոցիալական խմբերի միջև թշնամանքի աճ, քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահության խորացում, տեղեկատվական պղպջակների և բևեռացված մեդիայի ազդեցություն, հանրային դիսկուրսի կոշտացում և հասարակական կապիտալի նվազում (Putnam 2000):

**5. Միջազգային քաղաքական դաշտի թուլացում**

Բևեռացված հասարակությունները կարող են դառնալ անարդյունավետ կամ անկայուն գործընկերներ միջազգային հարաբերություններում (Օրինակ՝ Բրեքսիթի ժամանակ Միացյալ Թագավորության ներսում հակասությունները կաթվածահարեցին երկրի արտաքին քաղաքականությունը) (Clarke, Goodwin, Whiteley 2017): Ներքին պառակտվածությունը կարող է խանգարել արտաքին քաղաքական որոշում կայացնելուն, քանի որ տարբեր խմբերը կարող են ունենալ հակասական կարծիքներ միջազգային գործընկերների և առաջնահերթությունների վերաբերյալ:

**6. Ընտրական համակարգերի նկատմամբ անվստահություն**

Բևեռացումը կարող է առաջացնել կասկածներ ընտրությունների արդարության վերաբերյալ: Ընտրությունների կազմակերպման գործընթացում նույնիսկ աննշան խնդիրները բևեռացված հասարակությունում կարող են ընկալվել որպես դիտավորություն՝ անարդարության կամ խարդախության ապացույց: Քաղաքական առաջնորդները և լրատվամիջոցները հաճախ օգտագործում են ապատեղեկատվություն կամ քարոզչություն՝ ընտրությունների լեգիտիմությունը կասկածի տակ դնելու համար: Ընտրական ինստիտուտները (օրինակ՝ ընտրական հանձնաժողովները) բևեռացման պայմաններում կարող են դառնալ կոռուպցիայի, ճնշումների կամ միջամտությունների թիրախ: Ընտրազանգվածը հաճախ բաժանվում է «մենք ընդդեմ նրանց» սկզբունքով: Ընտրությունների արդյունքները, անկախ դրանց արդարությունից, միշտ ընկալվում են որպես մյուս կողմի հաղթանակ՝ իրենց խմբի շահերի հաշվին:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարող ենք ասել, որ հասարակության բևեռացումը լուրջ մարտահրավեր է քաղաքական կայունության համար, քանի որ այն նպաստում է քաղաքական ինստիտուտների թուլացմանը, պոպուլիզմի վերելքին և ընտրական համակարգի նկատմամբ անվստահության խորացմանը: Բևեռացված միջավայրում հասարակությունը բաժանվում է հակամարտող խմբերի, ինչը բարդացնում է երկխոսությունն ու խոչընդոտում կայուն կառավարման գործընթացները: Այս խնդրի հաղթահարման համար անհրաժեշտ է՝

- զարգացնել ներքաղաքական երկխոսությունը և խթանել հասարակական համերաշխությունը,
- ապահովել ինստիտուտների անկախությունն ու թափանցիկությունը,
- ընդլայնել մեդիա գրագիտությունը՝ զերծ մնալով ապատեղեկատվությունից,
- հզորացնել քաղաքացիական հասարակությունը՝ խթանելով քաղաքական մասնակցությունը:

Միայն խորքային բարեփոխումների և հանրային վստահության վերականգնման միջոցով կարելի է հաղթահարել բևեռացման բացասական հետևանքները և ապահովել երկարաժամկետ քաղաքական կայունություն:

## Եզրահանգումներ

Ամփոփելով հասարակության բևեռացման պատճառներին և բևեռացման հաղթահարման ուղիներին նվիրված վերլուծությունը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

• Հասարակության բևեռացումը՝ որպես սոցիալական ու քաղաքական բարդ գործընթաց, պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք կարող են կրել սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնոլոգիական և այլ բնույթ: Այն կարող է առաջացնել լուրջ հետևանքներ՝ սկսած սոցիալական լարվածությունից մինչև քաղաքական համակարգի կաթվածահարում կամ տնտեսական խոչընդոտներ:

• Բևեռացումը ոչ միայն սրում է հասարակության մեջ եղած հակասությունները, այլ նաև վտանգում է հանրային համերաշխությունը, որը կենսական է քաղաքական կայունության ապահովման համար: Պետությունների ու հասարակությունների համար կարևոր է գտնել արդյունավետ միջոցներ այս երևույթի հաղթահարման համար՝ հակազդելով հնարավոր պառակտմանը, կանխելու համար էթնիկական, կրոնական և քաղաքական հակամարտությունները և ապահովելու երկարաժամկետ կայունություն:

• Հասարակության բևեռացումը լուրջ մարտահրավեր է քաղաքական կայունության համար, քանի որ այն նպաստում է քաղաքական ինստիտուտների թուլացմանը, պոպուլիզմի վերելքին, սոցիալական կապիտալի նվազմանը և ընտրական համակարգի նկատմամբ անվստահության խորացմանը: Բևեռացված միջավայրում հասարակությունը բաժանվում է հակամարտող խմբերի, ինչը բարդացնում է երկխոսությունն ու խոչընդոտում կայուն կառավարման գործընթացները:

• Մեծ հաշվով, հասարակության բևեռացման շատ պատճառահետևանքային նախադրյալներ առկա են նաև Հայաստանի Հանրապետությունում: Ուստի հասարակության բևեռացման սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ դետերմինանտների, բևեռացման հաղթահարման գիտական և համակողմանի ուսումնասիրությունը ձեռք է բերում հույժ կարևոր ռազմավարական նշանակություն պետության քաղաքական կայունության և հանրային համերաշխության ապահովման գործում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. “Apartheid”. *Encyclopedia Britannica*, 9 May. 2025, https://www.britannica.com/topic/apartheid. Accessed: 15 May 2025.
2. Bourdieu, Pierre. *Distinction: A Social Critique of the Judgement of Taste*. Harvard University Press, 1984.
3. Clarke, Harold , Goodwin, Matthew & Whiteley, Paul. *Brexit: Why Britain Voted to Leave the European Union*. Cambridge University Press, 2017.
4. Marx, Karl. *Capital: Volume I – Chapter 25: The General Law of Capitalist Accumulation* (S. Moore & E. Aveling, Trans.). 1867/2014.
5. Mason, Lilliana. *Uncivil Agreement: How Politics Became Our Identity*. University of Chicago Press, 2018, p. 192.
6. Moffitt, Benjamin. *The Global Rise of Populism: Performance, Political Style, and Representation*. Stanford University Press, 2016, p. 240.
7. Putnam, Robert. *Bowling Alone: The Collapse and Revival of American Community*. Proceedings of the 2000 ACM conference on Computer supported cooperative work, 2000.
8. Volle, Adam. “Occupy Wall Street”. *Encyclopedia Britannica*, 13 Mar. 2025, https://www.britannica.com/topic/Occupy-Wall-Street. Accessed: 16 May 2025.
9. Weber, Max. *Economy and Society*. 1922, p. 926.

# SOCIETY POLARIZATION AS A FACTOR AFFECTING POLITICAL STABILITY

**TIGRAN GHAZARYAN**
*Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,*
*Personnel Department of the Police Troops, Head, Lieutenant Colonel;*
*Yerevan Institute of Forensic Examination and Psychology, Lecturer;*
*Yerevan State University, Faculty of International Relations, Department of Political Science, Ph.D.Student; Lawyer, Political Scientist,*
*Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to assess the impact of societal polarization on political stability. It examines the various causes of polarization in socio-economic, political, cultural, historical and other areas, as well as its consequences for society, such as social tension, political polarization, economic crises and socially destructive effects.

To achieve the goal, the following tasks were set: to study the main causes and consequences of polarization, possible ways to overcome it, to analyze how polarization affects the political stability of the country, what problems it creates for ensuring the effectiveness of political structures, how the unity of society and political dialogue are reduced.

Historical, comparative, analytical, theoretical, causal and systemic methods were used in the research.

The main conclusion made within the framework of the research is that the polarization of society, as a social and political process, is a continuous and complex phenomenon, which has many causes: socio-economic, political, cultural, technological and other. It can cause serious consequences, ranging from social tension to the paralysis of the political system or economic obstacles. Polarization not only exacerbates the contradictions in society, but also threatens public solidarity, which is vital for ensuring political stability. It is important for states and societies to find effective means to overcome this phenomenon, counteracting possible division, preventing ethnic, religious and political conflicts and ensuring long-term stability.

**Keywords**: *Polarization of society, political stability, political contradictions, social tension, political institutions, conflicts, institutional weakening, value conflict, populism, legitimacy.*

# СОЦИАЛЬНАЯ ПОЛЯРИЗАЦИЯ КАК ФАКТОР, ВЛИЯЮЩИЙ НА ПОЛИТИЧЕСКУЮ СТАБИЛЬНОСТЬ

**ТИГРАН КАЗАРЯН**
*аспирант кафедры политологии факультета международных отношений Ереванского государственного университета,*
*преподаватель Института судебной экспертизы и психологии Еревана,*
*начальник отдела кадров войск полиции Министерства внутренних дел Республики Армения, подполковник, юрист, политолог,*
*г. Ереван, Республика Армения*

Целью статьи является оценка влияния общественной поляризации на политическую стабильность. В исследовании рассматриваются различные причины поляризации в социально-экономической, политической, культурной, исторической

и других сферах, а также ее последствия для общества, такие как социальная напряженность, политическая поляризация, экономические кризисы и социально деструктивные эффекты.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: изучить основные причины и последствия поляризации, возможные пути ее преодоления, проанализировать, как поляризация влияет на политическую стабильность страны, какие проблемы она создает для обеспечения эффективности политических структур, как она нарушает единство общества и политический диалог.

В ходе исследования использовались исторический, сравнительный, аналитический, теоретический, причинно-следственный и системный методы.

Главный вывод исследования заключается в том, что поляризация общества как социальный и политический процесс представляет собой непрерывное и сложное явление, имеющее множество причин: социально-экономические, политические, культурные, технологические и другие. Она может вызывать серьезные последствия, начиная с социальной напряженности и заканчивая параличом политической системы или экономическими препятствиями. Поляризация не только обостряет противоречия в обществе, но и ставит под угрозу общественную солидарность, которая жизненно важна для обеспечения политической стабильности. Государствам и обществам важно найти эффективные способы преодоления этого явления, противодействуя потенциальной фрагментации, предотвращая этнические, религиозные и политические конфликты и обеспечивая долгосрочную стабильность.

**Ключевые слова:** *поляризация общества, политическая стабильность, политические противоречия, социальная напряженность, политические институты, конфликты, институциональное ослабление, ценностный конфликт, популизм, легитимность.*